## 52. ԹԱ ՀՈՒՆՑ Ա ՔՅՈՌՕՂԼԻՆ ԽԱՆԸԵՆ ԸԽԾԸԿԱՆԸ ՓԸԽԾԸՑՆՈՒՄ

*Քյոռօղլին խանըեն ըխծըկանը տըեսած ա ինում, հավան կացած։ Մին օր ուրան հնգըերունցը հըվաքում ա, հըրցնում, թա հու կըկա՞րե քյինա էտ ըխծըկանը փըխծըցնե, պիրի։ Դալի-Հասանն ասում ա.—Ես կըքյինամ պիրիմ։ Շորերը փոխում ա քյինամ, կարում չի ըխծըկանը կօշտը տանը կյա. խանըեն մարթիքյը ճինանչում ըն, փռնում վըննըրեն կաշին մաշկում, մաշը տիրմանավ լըսնում, ուրան էլ ծառան կապում, թողում արունը քյինալիս։*

*Մին քանի օր վըեր անց ա կենում, Քյոռօղլին քչերն ըրազումը տըեսնում ա, վըեր ուրան կեոքյը տանը կալին։ Ըր ա կենում նորից հնգըերունքը հըվաքում, ասում՝ կա՛, չիկա՛, Դալի-Հասանը նըեղ տըեղ ա, ես քյինալ պիտիմ ըզատեմ։ Հնգըերունքն ասում ըն՝ բիրաղի ծիյանքը նատըենքյ քյինանք, Քյոռօղլին ասում ա.—Չէ՛, հալա ես քյինամ, եռնան վըեր կըյըտանամ, տուք էլ կըկյաք։*

*Քյոռօղլին քյինամ ա սարեն պտկըեն վըեննը կենում, մեհեռ շատ պեցուր նարա տամ։ Դալի-Հասանը վըեր Քյոռօղլուն ասան ըսկանում ա, ծըեռքը տանում ա տափեն գյոլ տուված ուրան առնան հափռում, խմում։ Խանըեն մարթիքյը տանը ըն կյամ Քյոռօղլուն ղուլբուղ անում, փռնում, տանում խանըեն կօշտը։ Խանն ասում ա՝ տարեքյ քցիցեքյ էսհինչ տըեղեն խոր փոսը, թուղեցեքյ ընդըեղ մըեռնե։*

Քյոռօղլուն տանում ըն քցում փոսը, խանըեն ախճիգյը տրա հետե ամմըեն օր Թաքուն հաց-ճո̈ւր ար տանում, Քյոռօղլուն ըտըեղ Թաքուն պահում։

Մին քանի օր վըեր անց ա կեննում, Քյոռօղլուն հնգըերունքը տըեսնում ըն, վըեր Քյոռօղլին կյամ չի, ասում ըն՝ Քյոռօղլին նըեղ տըեղ ա, յա յըլ կլո̈խը յիրա̈ն չի, Թա չէ մհե եա ար եկալ։ Իսաբալին եր ա կեննում, ծին յիհա̈րում, նստում, քյինա̈մ խանըեն ամարաԹան մուտանում, ծին պեց Թողում, ինքյը քյինա̈մ մին պառավ քԹեննում, պռավըեն հըրցնում, Թա ինձ հունց կըկա՞րես տանըես խանըեն ըխճըկանը կօշտը։ Պառավը Թա՝ տա շատ տիժա̈ր պեն ա, խանըեն ըխճըկանը պըլատըեն չորս ա̈նգյո̈նը լոխ մարԹիքյ ըն վըեննը կըցըրած։ Իսաբալին տո̈ւս ա օնում մին յըլլըխում կապած խիլլա̈ վըեսակե տամ պռավըեն, Թա հունց ջուսա օղում ա ինի, պիտի տանըես։ Պառավը Թա՝ մեննակ կնգան շորըերավ քեղ կըկարեմ տանըեմ ընդըեղ։ Քյինա̈մ ա մին ծըեռք կնգան շորեր ինքյ օնում, պիրում, Իսաբալին կյեննում ա, պռավըեն նհըետ քյինա̈մ խանըեն ըխճըկանը կօշտը։ Իսաբալին մնամ ա տո̈նսո̈նմը, պառավը քյինա̈մ ա ըխճըկանն ասում խաԹ մին կնեգյ կա, յոր չըս օնըե՞յ, քու քշտիտ ծառայի։ Ախճիգյն ասում ա.—Պեր, յոր կօնըեմ։ Պառավը տո̈ւս ա կյամ Իսաբալուն ծեն տամ. կյամ ա։

Ախճիգյը տրա իրեսին վըեր եշում ա, տըեսնում ա հա̈լա̈ մեննակ բեղերը ըսկսալ ա նոր-նոր փանըեյը, մտկումն ասում ա՝ սա հենց ա տղա ինի, հալա մին փորցըեմ, տըեսնամ։ Տա Իսաբալուն իրեք ըխճըկան նհըետ ղարկում ա մուտըե բախճան վըեր ո̈ւրա̈ն հետե ծաղեգյ քաղըեն։ Տահանք մին խիլլա̈ վըեր քյինա̈մ ըն, խանըեն ախճիգյը բո̈ւրդա̈ն պեցո̈ւր ծեն ա տամ, ասում՝ ղարիբ տղա, հե՞յ, եա տըես Իսաբալին դասաին եա ա եշում, ախճիգյը ծըեռքավ ա անում, Թա եա տըես Իսաբալին կյամ ա ըխճըկանը կօշտը, ախճիգյը հըրցնում ա, Թա հու վը՞ս, հինչ ը՞ս, հիչտըղա՞ցըե յըս։ Իսաբալին Թա՝ դե ես Քյոռօղլուն մըրԹուցան ըմ, եկալ ըմ տըեղը գյիդամ։ Ախճիգյը Թա՝ ըրխըյին կաց, Քյոռօղլին էն ա սաղ, էսհինչ տըեղըեն փոսումը, ամմըեն օր ես նրա հետե հաց-ճո̈ւր ըմ տանում, քշերավ, լո̈նա̈ մոտե կըքյինա̈նք վըերան տո̈ւս օնըեննքյ, բիրա̈դի ըստըեղաս փախճինքյ։

Իսաբալին ըտըեղ կեննում ա, քշերավ քյինա̈մ ըն փոսան մուտանում, տըեսնում՝ Քյոռօղլին ինքյն ո̈ւրա̈ն խոսում ա. «Դա̈միրչօղլին քշտիս պիտա̈ր, Դա̈լի-Հա̈սա̈նը քշտիս պիտա̈ր, Բաբա

Քյանհանը քշտիս պիտար, Քյուրդօղլին քշտիս պիտար...»։ Իտի լոխճինին ընըմնեն մին-մին տամ ա, Իսաբալուն անումը տամ չի։ Իսաբալին ծեն ա տամ, թա՝ իգլիթ Քյոռօղլի, պա իսկի Իսաբալին մըեառըա չինգյա՞վ։ Քյոռօղլին վըեր Իսաբալուն սծսն ըսկանում ա, ուրխանում ա, ըխշարքավըս մին տըեռնում, ասում.— Իսաբալի, դե հինչ ա՞նըեմ, էտ վախտը էյնըս չեկեր։

Իսաբալին նհըետը քյենդիր ա ինհում տարած, մըեկնում ա, Քյոռօղլին ուրան կպտում ա, Իսաբալին ծիքյ ա տամ, թա տուս օնըե, կարում չի։ Տըեղատ մոտե հոնձ ընողնե յըն ինհում. քյինհամ ա հըվաքում պիրում, բիրանգի ծիքյ ըն տամ, Քյոռօղլուն տուս օնում։ Հնգըերունքն էլ ծիյանքը նստած կյամ ըն, Քյոռօղլուն ղոաթն էլ նհըտնըեն պիրում։ Ծիյանքը նստում ըն, խանեն ախճիգյն էլ նհըտնեն տանում, քյինհամ Դալի-Հասանըեն էլ կապըեըը հա անում, տինհում ծիյին յիրա, հղե ինհում։ Խանըեն ծառանըեն դույուղ ըն ջիհում, հարայ ըն տամ, զորք հըվաքում, քյինհամ Քյոռօղլուն դիստին նհըետ կռըեռը տամ, խանըեն ախճիգյն էլ ա զորքըեն նհըետ կոըև անում ծըեռքան յարալու տըեռնում։ Վերջը, տահանք զորքըեն հա ըն տամ, ախճիգյն էլ յոր օնում, քյինհամ։